

զբաղեցնող վեցեակի մէջ հրապարակախօսական ստեղծագործութեան տեսակէտից դուրէ՛ք բաներ, բաներ, բաներ» են, սակայն գեղարուեստական քննադատութիւնը պէտք է ցոյց տայ, որ այդ «բաները» ունին խորունկ բովանդակութիւն՝ միայն թէ հարկաւոր է նրանց կարգալ իմանալ, ինչպէ՞ս հարկաւոր է . . .

(շարունակելի)

Ա. Տէրտեան



ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԽԱՆԳԱՐՄՈՒՆՔ

Պատուական «Արարատ» ամսագրից Յդոստոսի տետրապուստի կարգացի «Յուշարար» ստորագրութեամբ մի փոքրիկ յօդուած, ուր հեղինակն շատ իրաւացի կերպով խօսում է մեր արդի աշխարհիկ լեզուի մէջ վերջին ժամանակներս կատարուող աղաւաղմանց մասին, որը մի շատ տխուր և կամայականութիւնից ոչ-զերծ երևոյթ է դարձել և հայկական գրագիտութեան վնաս է բերում: Ես «Է» գիրը չեմ գործածում, ասում է մէկը, ես «ո»ն չեմ ընդունում, հեղինակաւոր գիտնականի պէս բացականչում է միւսը, ես գրում եմ «Աէպօ'ի», «Դարչօ'ի» և ոչ Աէպոյի, Դարչոյի» յայտարարում է երրորդը և այլն, և այլն:

Այդպիսով ստացւում է մի խառնաշփոթ դրութիւն և անգրագիտութիւնը զարգանում, քանի որ ստուար մեծամասնութիւնը, և նամանաւանդ աշակերտութիւնը, անտեղեակ լինելով լեզուագիտութեան հմուտ և դարերի ընթացքում կազմուած և կայացած օրէնքներին հետևում է վերոյիշեալ ինքնակոչ հեղինակներին և աղաւաղում գրագիտութիւնը ի վնաս լեզուի:

Լեզուի ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մացնելը պէտք է վերապահուած լինի բարձրագոյն գիտնական հաստատութեանց և հեղինակաւոր լեզուագէտ անձանց, և ոչ առաջին պատահած քնարերգ բանաստեղծի կամ հրապարակախօսի: Ես սիրով կընդունեմ երբ ինձ մի գիտնական ասէ, որ պէտք է գրել «ադաղաղ» (այդ-աղաղակել) և ոչ «աքաղաղ»: Բայց եթէ մէկը ինձ խորհուրդ տայ գրել «Սաքօի» և ոչ «Սաքոյի», ես չեմ ընդունիլ, որովհետեւ այս ուղղագրութիւնը գիտնական հիմք չունի և հակառակ է հայոց լեզուի տարրական կանոններին:

Վերջապէս ի՞նչի համար է այս պարզութիւնը, եթէ մինչև անգամ ասենք որ «Սաքօի» աւելի պարզ է քան Սաքոյի: — Ոչնչի:

Կարո՞ղ էք գտնել մի ֆրանսիական գիրք, ուր հեղինակը առանց քաշուկելու, մերայնոց նման, առնէր գրէր *dé troupe de toro été sur le chan* (des troupeaux de taureaux étaient sur les champs) կամ մի որ և է անգղիացի տգեղ պարզութեան հասցնէր իւր մայրենի լեզուի բարդ ուղղագրութիւնը:

Դժբաղդաբար մեր հայերիս մէջ ամեն բան կարելի է:

Մեծ. պ. Յուշարարն իմ ուշադրութիւնը յատկապէս դարձրեց մեր աշխարհիկ լեզուի նախդիրներն խնդրառութեան վրայ, և նուազաւ հեռու լինելով հմուտ հայկաբան լինելուց և փոքր ի շատէ համեմատական լեզուաբանութեան պարայած լինելով, կառաջարկեմ նախդիրներն խնդրառութեան վերաբերմամբ հետեւեալ ուսումը:

Ստուգաբանութեան նախդիրներն կոչուած բանի մասները ըստ մեծի մասին հին գոյական անուանց զանազան հոլովներով մնացորդներ պէտք է համարել, թէև մէջերը կան նաև մակբայներ, բայերի արմատներ և այլն: Այդ վերաբերւում է համարեալ ըստ լեզուներին: Ժամանակով այդ գոյականածնախդիրներն իրենց վերաբերեալ անունների մօտ դրուելով, յատկացեալի դեր են կատարած: Նայնաւելի պարզ կերպով երևում է աշխարհիկ լեզուի մէջ: Քանի որ հայոց աշխարհիկ լեզուի ոգին խստիւ պահանջում է, որ յատկացեալը դրուի իրեն յատկացուցչից (սեռ հ.) յետոյ, օր. մարդու գլուխը, սեղանի տակ և այլն, ուստի աշխարհիկ լեզուի նախդիրները դրւում են անունից յետոյ և այսպիսով կարող են կոչուած լինել ոչ նախդիրներ, այլ յետդիրներ—ոչ *praepositiones*, այլ *postpositiones*, ինչպէս, օր. *առևաց ради*, (*Bora ради*, *թէև և ради Bora*, ըստ *gratia, causa*) և ինչպէս որ այդ գոյութիւն ունի համարեալ ըստ տեղական լեզուներում. օր. մէնի իւշիւն, և այլն:

Դառնում եմ նորից աշխարհիկ լեզու նախդիրներն ուսուման:

Նախդիրներն թիւն աշխարհիկ լեզուի մէջ փոքր է:

Սրանց մեծ մասը պահանջում է սեռական հոլով, մի քանիսը արական և մէկը (բացի) բացառական:

Չարմանալի է որ հայցական հոլով պահանջող նախդիր չկայ, եթէ չհաշուենք դրաբարի մնացորդները, որ գործ են ածւում աշխարհիկում մերթ ընդ մերթ ի վնաս, առ ինքն ունեցած և այլն:

Նախդիրները, գոյական և ածական անուանց մօտ գործածուելիս, մեզ տակաւին ցոյց չեն տալիս, թէ ո՞ր հոլովն է սեռ., թէ արական, քանի որ աշխարհիկ լեզուի այդ երկու

հոլովներն իրար նման են. այս իսկ պատճառով մեզ նախդրի խնդրառութեան հարցին պատահելիս անհրաժեշտութիւն է առաջ դալիս դիմել էական դերանուանց, քանի որ սրանց սեռ. և տրակ. հոլովները շատ տարբեր վերջաւորութիւն ունին:

Աչքի առաջ ունենալով նախդիրների երկու իրարից տարբեր ընտանիքութիւն ունենալը, կարելի է ընդունել հետևեալ ուսմունքը:

Այն գոյականաձև նախդիրները, որոնք անուանց նման փոփոխութիւններ ունին, պէտք է, ըստ իս, պահանջեն սեռ. հ., որը կարծես թէ սրանով դառնում է յատկացուցիչ. Ծր. վրայ, վրայի, վրայով, վրայից. տակ, տակի, տակով, տակից. մօտ, մօտի, մօտից, մօտով և այլն: Աւրեմն, իմ մօտ, քո մօտ, ձեր մօտ և ոչ ինձ մօտ, քեզ մօտ, ձեր վրայ, մեր վրայ և ոչ ձեզ վրայ, մեզ վրայ և այլն: Քանի որ «համար», «առանց» «հետ» հոլովական փոփոխութիւններ չունին, սրանք դուրժ են ածում միայն տրակ. հոլովով: Այս հարցում ղեկավարուելը ուսու լեզուի կանոններով, ինչպէս որ ասում է պ. Յուշաբարը, ոչ մի դիմնական հիմք չունի:

Նաա և շատ ցանկալի կլինէր, որ կազմուէր մի քերականութիւն գիտնական ձևով աշխարհիկ արարատեան լեզուի համար և հեղինակները, հիմնուելով հին հայոց լեզուի կանոններին, բայերի ևս խնդրառութեան մի աղիւսակ էլ դնէին մէջը, օրինակներ առնելով մաքուր աշխարհաբառ դուրժածող հեղինակներից: Այն ժամանակ մենք չէինք ունենայ այնպիսի տգեղ սճեր, որպիսիները տեսնում ենք մեր դրականութեան մէջ, օր.

«Ն. Ն» պատկուէց Մ. Մ. օրիորդի վրայ, գու սիրահարում ես . . . ի վրայ և այլն:

Այսպիսի տգեղ սճերն ահամայ յիշեցնում են այն անձնաւորութիւնը, որը Ֆրանսիացի մի ուրիշ անձի գրել էր՝ venez chez nous, nous avons jouer sur le piano et vous dansez sous le piano—եկէք մեր տուն, մենք կնուագենք պիանոյի վրայ (փոխ. պիանոյ) և դուք կպարէք պիանոյի տակ:

Գալով մի ուրիշ հարցի, որի մասին խօսում է պ. Յուշաբարը, այն է թէ ինչպէս գրել. «կ'ասեմ», թէ «կասեմ», այդ, ըստ իս, մի էական նշանակութիւն չունի լեզուագիտութեան մէջ:

Նաա ուրախ կլինէի եթէ աւելի հեղինակաւոր անձինք պատասխանէին ինձ, թէ սրբան ուղիղ կամ սխալ էր իմ առաջարկած ուսմունքը աշխարհիկ նախդիրների մասին:

Մահակ Թանդեան.